Հաստատում եմ

Տնօրեն ___ Վ.Առաքելյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ „ՊՌԱԿ"

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍՂԵԿ ___ ԱԻԴԱ ԳԱԼՍՏՅԱՆ

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Ներածություն /դասարանի ընդհանուր բնութագիրը/

11-րդ դասարանում սովորում են 3 աշակերտ՝ 2 տղա ,1 աղջիկ:Դասարանը համախմբված է և ակտիվ:Աշակերտները համերաշխ են:Նրանք օգնում են միմյանց ցանկացած հարցում:Դասարանը ակտիվորեն է մասնակցում համադպրոցական միջոցառումներին, հանրօգուտ աշխատանքներին և շաբաթօրյակներին:

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում՝

Ուսուցիչ-աշակերտ,դպրոց-ընտանիք սերտ կապի ստեղծում:

Աշխատանք աշակերտների կարգապահության, մաքրությն,ավագի ընտրության, սանիտարահիգենիկ վիճակի պահպանում:

Անցկացնել դասալսումներ, ծնողական ժողովներ:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն:Ծանոթացնել եկեղեցական տոներին,ընթերցել Աստվածաշունչ:Կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ:Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ,որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն : Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտություն և ճաշակ :Սովորեցնել նրանց գնահատել արվեստը:Տեղեկություններ թանգարանների, պատկերասրահների մասին:Այցելել պատկերասրահներ, մշակութային կոթողներ:

3.3Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն:Զրույցներ նվիրված հայրենիքի, հայրենասրությանը, ծանոթանալ ազգային հերոսների պատմությանը:

3.4Ֆիզիկական դաստիրակություն: Կազմակերպել աշակերտների ֆիզիկական զարգացմանը և առողջության պահպանմանը նպաստող ակտիվ միջոցառումներ, մրցույթներ, էքսկուրսիաներ, արշավներ, էստաֆետային խաղեր,սպորտլանդիաներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն:Աշակերտների մոտ դաստիարակել գիտակցական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ և հոգատար վերաբերմունք գործիքների նկատմամբ: Տալ աշակերտներին այն գաղափարը,որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն:Զրույցներ շրջապատի , շրջակա միջավայրի, մաքրության պահպանման մասին:Զրույցներ շրջապատի մաքրության կարևորության մասին ,,Մարդը բնության բարեկամն է՞ , ,,Պահպանեք բնությունը՞ թեմաներով զրույցներ:Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում:

**4.** Դպրոց- ընտանիք կապը:Ամրապնդել դպրոց- ընտանիք կապը:Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ:Ընտրել ծնող կոմիտեի խորհուրդ-նախագահ և օգնականներ: Ծնողներին ներգրավել դասարանական աշխատանքների մեջ:Երեխաները պետք է հասկանան,որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը,որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I- ԿԻՍԱՄՅԱԿ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա- դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ժամանակը | Կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Աշխատանքային պլանի կազմում,նոր ուսումնական տարվա դասագրքերի բաշխում | | աշակերտ դասղեկ |
| 2. | Կորոնավիրուսի համավարակի պայմաններում հակահամաճարակային կանոնների բացատրում և դրանց պահպանման կարևորության գիտակցում : Պատասխանատու վարքագծի ձևավորում : ,,Կրիր դիմակ՝ փրկիր կյանքեր '': | | աշակերտ դասղեկ |
| 3. | ,,Զրույց նվիրված Հայաստանի անկախությանը '' | | աշակերտ դասղեկ |
| 4 | Արտագաղթը չարիք է | | աշակերտ դասղեկ |
| 5. | Ուր եմ գնալու սովորելու | | աշակերտ դասղեկ |
| 6. | Դժվարություններ որոնց բախվում եմ | | աշակերտ դասղեկ |
| 7. | ,,Ամեն ինչի սկիզբը սերն է '' թեմայով քննարկում | | աշակերտ դասղեկ |
| 8. | ,,Բնական աղետների և անվտանգության կանոնները պահպանելու կարողություն '' | | աշակերտ դասղեկ |
| 9. | ,,Մասնագիտություններ որոնց ընտրում են'' թեմայով զրույց բանավեճ | | աշակերտ դասղեկ |
| 10. | ,,Ես 17 տարեկան եմ '' | | աշակերտ դասղեկ |
| 11. | ,,Գեղեցիկն ու տգեղը մեր կյանքում '' | | աշակերտ դասղեկ |
| 12. | Զրույց՝,,Մարդիկ առանց որոնց ես միայնակ եմ '' թեմայով | | աշակերտ դասղեկ |
| 13 | ,,Ինչպես ապրել կյանքը '' | | աշակերտ դասղեկ |
| 14 | ,,Դպրոցական օրերի դժվարությունները և ուրախությունները'' | | աշակերտ դասղեկ |
| 15. | ,,Ինչպես հաղթահարել ,,ծուլությունը ''թեմայով բաց քննարկում և վերլուծություն: | | աշակերտ դասղեկ |

## II-ԿԻՍԱՄՅԱԿ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա- դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ժամանակը | Կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | 1-ին կիսամյակի ամփոփում | 12.01.24թ | |
| 2. | Բանակի օր | 28-01-24թ. | |
| 3. | Գրքի տոն | 17-02-24թ. | |
| 4 | ,,Ով է իսկական քաղաքացին ՜ | | աշակերտ դասղեկ |
| 5. | ,,Ինչպես զգուշանալ խաբեությունից ՜ | | աշակերտ դասղեկ |
| 6. | ,,Երբ քեզ շրջապատում են սիրելի մարդիկ ՜ | | աշակերտ դասղեկ |
| 7. | ,,Լսելու կարողություն՜ | | աշակերտ դասղեկ |
| 8. | ,,Կարողանում եմ արդյոք սիրել ՜ | | |
| 9. | Մարտի 8 | | |
| 10. | Իմ երազանքներն ու նպատակները | | |
| 11. | Զրույց ,,Եղեռնի ՜ օրվա նվիրված | | աշակերտ դասղեկ |
| 12. | ,,Արցախյան հերոսամարտիկները ՜ : Եռաբլուր պանթեոնում | | աշակերտ դասղեկ |
| 13 | ,,Ովքեր են պատերազմ հրահրողները՜ | | աշակերտ դասղեկ |
| 14 | ,,Վերջին զանգ ՜ խորագրով գեղարվեստական ցերեկույթի կազմակերպում: | | աշակերտ դասղեկ |